ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

شورای خلیفه گری ارامنه تهران و شمال

ARMENIAN DIOCESAN COUNCIL OF TEHRAN AND NORTH

Թուական ..... 19 Մայիս 2022 ..... تاریخ:

Թիւ ..... 68-2022-604 ..... شماره:

Իրանի իսլ. Հանրապետութիւնում
Հայաստանի Հանրապետութեան
Արտակարգ եւ Լիազօր Դեսպան
Մեծարգոյ
Տիար Արսէն Աւագեան

Հայաստանում իրականացւող արդար եւ համազգային բողոքի ակցիաներին հակազդող բռնաճնշումների եւ իշխանութեան կիրառած ապազգային քաղաքականութիւնը դատապարտող գրութիւններին մեր ձայնը միացնելով բարձրաձայնում ենք, որ հայ ժողովուրդն իր դարաւոր պատմութեան ընթացքում պայքարի ու մաքառման չնորհիւ է հայ մնացել, երկիր կառուցել եւ անկախ պետականութիւն հաստատել, քաջ գիտակցելով, որ անկախութիւնը՝ յարատեւութեան միակ երաշխիքն է եւ հպարտութեան ու արժանապատուութեան սկզբնաղբիւրը:

Արցախեան 44-օրեայ պատերազմի հանգուցալուծման կապակցութեամբ, կնքւած յայտարարութեան թւականից ի վեր Հայոց երկիրն եւ հայ ժողովուրդն օրհասական օրեր է ապրում:

Հայաստանի Հանրապետութեան գործող իշխանութիւնն իր անպատասխանատու մօտեցմամբ, նսեմացնելով Հայոց պետութեան արժանապատուութիւնը, չարունակում է գրկաբաց ընդունել հայոց վաղեմի թշնամիների հայութեանը պարտադրուող պահանջները, որոնց գործադրմամբ կորցնելու ենք քաջարի պայքարի ու նահատակների արեան գնով ազատագրւած Արցախը, վտանգւելու է Սիւնիքը եւ առաւել եւս վտանգւելու է Հայաստանի սահմանների ու հայ ժողովրդի անվտանգութիւնը եւ կործանման եզրին է հասնելու Հայաստանի Հանրապետութիւնն ու պետականութիւնը:

Հայաստանը եւ Արցախը ընդմիշտ եղել են Սփիւռքի կեանքի կիզակէտը եւ անկասկած, մեր ազգի այս երկու բեւեռները իրենց խնդիրներով ու հրամայականներով Սփիւռքի համար միշտ մնալու են առաջնահերթութիւն:

تهران، خیابان استاد نجات اللهی، شماره ۲۹۵ تلفن: ۳۶-۸۸۹۰۱۶۳۴، ۱- ۸۸۸۹۷۹۸۰ فاکس: ۸۸۸۹۲۶۱۷

Թեհրան, Նեջաթօլլահի պող., համար 295 Հեռախոս: 88897980-1, 88901634-36 Հեռապատճէն: 88892617

E-mail: tamakan@armprelacy.com, tamakan@tehranprelacy.com www.tehranprelacy.com

ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

شورای خلیفه گری ارامنه تهران و شمال

ARMENIAN DIOCESAN COUNCIL OF TEHRAN AND NORTH

Թուական .....
Թիւ .....

تاریخ: .....
شماره: .....

Արդ, հայ ժողովրդի համար ճակատագրական այս օրերին, անկոտրում կամքով եւ աննահանջ պայքարի սկզբունքին համոզւած լինելով, որպէս Սփիւռք միացնում ենք մեր ձայնը համազգային բողոքին եւ զօրակցում ենք ժողովրդական արդար ընդվզմանը: Պահանջում ենք Հայաստանի ու Արցախի հողային ամբողջականութեան եւ սահմանների պաշտպանումը եւ դատապարտում ենք Հայաստանի ու Արցախի տարածքների բռնագրաւման հանդէպ ցուցաբերած ապազգային քաղաքականութիւնը եւ կրթադաստիարակչական ոլորտում անգամ, մեր պատմական անցեալի եւ ազգային-հոգեւոր արժէքների հանդէպ ունեցած անտարբեր վերաբերմունքը, հոգեւոր արժէքների աղաւաղումը եւ սեփական իշխանութիւնը պահելու նպատակով, երկրում ներքին թշնամանք սերմանելու եւ արդար պահանջ ներկայացնող խաղաղ ցուցարարների նկատմամբ իշխանութեան կամակատար ոստիկանութեան բռնաճնշումների կիրառումը:

Հայ ազգի յարատեւման, արժանավայել ապագայի եւ արդար դատի լուծման գրաւականը եւ յաղթանակի երաշխիքը հենց սեփական ժողովրդի միասնական, անմնացորդ ու անվարան գործունէութիւնն է ի խնդիր Հայրենիքի պաչտպանութեան եւ հզօրացման:

ՅԱՐԳԱՆՕՔ՝

Թ.Հ.Թ. ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
شورای خلیفه گری ارامنه تهران و شمال

تهران، خیابان استاد نجات اللهی، شماره ۲۹۵ تلفن: ۳۶-۸۸۹۰۱۶۳۴، ۱- ۸۸۸۹۷۹۸۰ فاکس: ۸۸۸۹۲۶۱۷
Թեհրան, Նեջաթօլլահի պող., համար 295 Հեռախօս: 88897980-1, 88901634-36 Հեռապատճէն: 88892617
E-mail: temakan@armprelacy.com, temakan@tehranprelacy.com www.tehranprelacy.com